

**Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**  
**ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**  
**(2024թ.)**

**Շրջակա միջավայրի նախարարություն**

NN	Նպատակ	Միջոցառումներ	2024 թվականի համար նախատեսված	Միջոցառումների իրականացման արդյունքները	Միջոցառումների չկատարման, այդ թվում՝ սահմանված ժամկետում, պատճառները	Ժանդապարտություն
	2	3	4	5	6	7
1.	Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման և որակի բարձրացման նպատակով կառավարման գերարդյունավետ համակարգերի ներդրումը, ջրային ռեսուրսների պահպանման, այդ թվում՝	1.2 Հյուսիսային ջրավազանային տարածքի կառավարման պլանի մշակում և Կառավարության որոշման ընդունում	- Հյուսիսային ջրավազանային կառավարման պլանի նախագծի մշակում	ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող «EU4Environment – Ջրային ռեսուրսների և շրջակա միջավայրի վերաբերյալ տվյալներ» ծրագրի շրջանակներում մշակվել է Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածքի 2025-2030 թվականների պլանի նախագիծը և գտնվում է քննարկման փուլում: Պլանի նախագիծը շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության արդյունքում ստացել է փորձաքննական դրական եզրակացություն:		2021-2026թ թ.
2	Ջրահեռացման ու կեղտաջրերի մաքրման գործընթացի կանոնակարգումը, Արարատյան արտեզյան	1.8 Արարատի և Արմավիրի մարզերում խորքային հորերի լուծարման կամ կոնսերվացման աշխատանքների	- Արարատի և Արմավիրի մարզերում խորքային հորերի գույքագրման արդյունքների հիմա վրա լուծարման կամ կոնսերվացման	2024 թվականի ապրիլ ամսից 3 անգամ հայտարարվել են մրցույթներ՝ 58 խորքային հորերի կոնսերվացման և լուծարման նպատակով, որից 7-ը ոչ ստանդարտ: Ոչ ստանդարտ հորերի լուծարման, կոնսերվացման համար մրցույթները չեն կայացել՝ մասնակիցներ	Կոնսերվացման և լուծարման աշխատանքների իրականացման նպատակով մշակվել է ՀՀ պետական բյուջեում փոփոխություններ կատարելու որոշման	2024թ. դեկտեմբերի 3-րդ տասնօ

	ավազանի և գետային էկոհամակարգերի պահպանությունն ու կառավարումը.	իրականացում	աշխատանքների իրականացման ժամանակացույցի սահմանում՝ ըստ առաջնահերթությունների -Ըստ ժամանակացույցի՝ 1-ին փուլով առաջնահերթ գնահատված Արարատի և Արմավիրի մարզերում խորքային հորերի լուծարման կամ կոնսերվացման աշխատանքների իրականացում	չլինելու պատճառով, իսկ 51 խորքային հորերի համար վերջին հայտարարված մրցույթում հաղթող է ճանաչվել 1 կազմակերպություն: 58 խորքային հորերի կոնսերվացման և լուծարման արդյունքում նախատեսվում էր խնայել շուրջ 3000լ/վրկ ստորերկրյա ջրային ռեսուրս:	նախագիծ, որով Կառավարության պահուստաֆոնդից նախատեսվում էր 79.3մլն դրամի հատկացում, մինչդեռ քննարկման արդյունքում, հաշվի առնելով նաև մինչև տարեվերջ լուծարման և կոնսերվացման աշխատանքների ամբողջությամբ իրականացման ռիսկայնությունը, որոշումը չի ընդունվել՝ նախագիծը հանվել է շրջանառությունից:	ոյակ
3	Սևանա լճի էկոհամակարգային և հավասարակշռության և կենսաբազմազանության պահպանումը, վերականգնումը, վերարտադրումը, բնականոն զարգացումն ու խելամիտ օգտագործումը.	2.2 Սևանա լճի շրջակայքում ջրածածկ և ջրածածկման ենթակա տարածքներում անտառմաքրման աշխատանքների իրականացում	Յուրաքանչյուր տարի՝ Սևանա լճի շրջակայքի տարեկան 244 հա ջրածածկ տարածքների մաքրման աշխատանքների իրականացում:	«Սևան» ԱՊ» ՊՈԱԿ-ի տեխնիկական միջոցներով իրականացվել է «Դրախտիկ» տեղամասի անտառմաքրման աշխատանքներ, որի 28.87 հա-ից ընդունվել է 18.8 հա:  Կապալառուի կողմից շուրջ 98,124,8 մլն դրամ գումարի շրջանակներում 2 տեղամասում նախատեսված 203.4 հա աշխատանքները չեն իրականացվել:	Կապալառու կազմակերպության կողմից պայմանագրի կատարման համար և տարբեր պատճառաբանություններով մաքրման աշխատանքներ չեն իրականացվել: Նախարարությունը նախաձեռնել է պայմանագրի միակողմանի լուծման գործընթաց:	2022 թ. և շարունակական
4		2.5 «Սևան» ազգային պարկի ռեկրեացիոն գոտում հանրային	- մրցութային կարգով պատվիրակված հանրային լողափերի սպասարկման որակի	Գործել է 5 հանրային լողափ (N1, N2, N3 հանրային լողափերի պայմանագրերը կողմերի		2024-2026թ թ.

		լողափերի գործարկում	բարելավմանն ուղղված աշխատանքների իրականացում	<p>համաձայնությամբ լուծվել է, 2024 թվականին հայտարարվել է մրցույթ, որի արդյունքում N1 և N3 հանրային լողափի համար 13.05.2024թ. և N2 հանրային լողափի համար 10.04.2024թ. կնքվել է նոր պայմանագրեր):</p> <p>N 1, N 2 և N 3 հանրային լողափերում իրականացվել են լրացուցիչ բարեկարգման և կահավորման աշխատանքներ, որոնք գործել են հանգստի սեզոնին:</p> <p>Հանրային լողափերի սպասարկման որակը բարելավելու նպատակով մշակվել և ներդրվել է հանրային լողափերի կահավորման և սպասարկման նոր պահանջներ և սկզբունքներ (այդ թվում հաշմանդամություն ունեցող մարդկանց համար պահանջներ), սահմանվել են էկոֆրենդլի մոտեցումներ</p>		հուլիսի 1-ին տասնօրյակ
5	Անտառների կայուն կառավարումը՝ անտառների պահպանությունը, պաշտպանությունը, օգտագործումը և անտառածածկ տարածքների ընդլայնումը՝ անտառապատման և ու անտառավերականգնման միջոցով, ու դրանց իրականացմանն	3.2 Անտառվերականգնման և անտառապատման աշխատանքների կազմակերպում, այդ թվում անտառային տնկարանների հիմնում և սերմնային տնտեսության զարգացում	<p>Անտառածածկ տարածքների ընդլայնում, անտառապատման ու անտառվերականգնման աշխատանքների իրականացման համար որակյալ տնկանյութի ստացում:</p> <p>- անտառմշակույթների հիմնում՝ 1000 հա</p>	<p>Իրականացվել են 345.4 հա անտառվերականգնման ու անտառապատման աշխատանքներ, այդ թվում՝</p> <ul style="list-style-type: none"> <li>• 265.4հա՝ անտառմշակույթի հիմնում, որից՝ <ul style="list-style-type: none"> <li>- 130 հա պետական բյուջեի ֆինանսավորմամբ՝ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի կողմից</li> <li>- 103.6 հա՝ սույն հաշվետվության 6.9 կետի ծրագրի շրջանակներում</li> <li>- 31.8 հա՝ այլ կնքված պայմանագրերով և ծառատունկ,</li> </ul> </li> <li>• 80.0 հա՝ կոճղաշիվային վերածի օժանդակում:</li> </ul>	<p>Անտառմշակույթների հիմնադրման աշխատանքների ոչ ամբողջությամբ իրականացումը պայմանավորված է ՀՀ պետական բյուջեից հատկացված ֆինանսական միջոցների ծավալով:</p> <p>Սույն կետի կատարման համար նախատեսված 2,837,113.82 հազ. դրամի դիմաց ՀՀ պետական բյուջեից հատկացվել է 839,579.4 հազ. դրամ:</p>	2021-2026թ թ.

	<p>ուղղված կարողությունների շարունակական հզորացումը.</p>			<p>2024թ ընթացքում իրականացվել են նախորդ տարիներին հիմնադրված անտառմշակույթների և տնկարանների ագրոտեխնիկական խնամքի աշխատանքներ</p>		
<p>6</p>		<p>3.3 Անտառների կառավարման ոլորտում անտառպահպանության, անտառվերականգնման և անտառօգտագործման նորագույն տեխնիկայի և սարքավորումների ձեռքբերում</p>	<p>Ըստ միջազգային դրամաշնորհային ծրագրով հաստատված ժամանակացույցի՝</p> <ul style="list-style-type: none"> <li>- անտառային ոլորտի նորագույն տեխնիկայի ձեռքբերում, այդ թվում «Պիկաս» տեսակի ամենագնացներ /14 հատ/, դրոններ /14 հատ/, GPS սարքեր /400 հատ/ և այլ սարքավորումներ, ծխի, ձայնի, ջերմության նկատմամբ զգայուն սարքեր /սենսորներ/ - 150 հատ, տեսանկարահանող սարքեր, դրանց սպասարկող սարքավորումներ /80 հատ/:</li> <li>-անտառային պտուղների և հատապտուղների հավաքագրման և վերամշակման</li> </ul>	<p>2024 թվականին տեխնիկայի և սարքավորումների ձեռքբերում չի իրականացվել:</p>	<p>Անտառների կառավարման ոլորտում անտառպահպանության, անտառավերականգնման և անտառօգտագործման նորագույն տեխնիկայի և սարքավորումների ձեռքբերման աշխատանքները նախատեսված են եղել ըստ միջազգային դրամաշնորհային ծրագրով հաստատված ժամանակացույցի: Հիմնական աշխատանքները նախատեսվում է սկսել 2025 թվականին: Վերջինս իրականացվելու է ՄԱԿ շրջակա միջավայրի ծրագրի Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի «Հայաստանում հողերի վերականգնում և էկոհամակարգային ծառայությունների բարելավում պտղատու և ընկուզավոր ծառատեսակների</p>	<p>2021-2026թ թ.</p>

			կենտրոնների /2 հատ/, բրիկետների արտադրության կետի /1 հատ/ հիմնում:		կենսաբազմազանության օգտագործման միջոցով» ծրագրի շրջանակներում (այսուհետ՝ Ծրագիր): 2024 թվականի դեկտեմբերի 18-ի դրությամբ Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի ֆինանսավորմամբ Ծրագրի իրականացման համաձայնագիրն ուղարկվել է «Վայրի բնության համաշխարհային հիմնադրամ» հայաստանյան գրասենյակ, որի ստորագրումից հետո Ծրագրի համաֆինանսավորման շրջանակներում Ծրագրի համաձայնագիրը կուղարկվի շրջակա միջավայրի նախարարություն՝ ստորագրման: Ծրագիրը կմեկնարկվի Համաձայնագիրը ստորագրվելուց հետո: Ծրագիրը հաստատված է և տեղադրված է ՄԱԿ շրջակա միջավայրի ծրագրի պաշտոնական կայքում:	
7	3.4 Վնասատուներից և հիվանդություններից անտառների պաշտպանության	- յուրաքանչյուր տարի նախատեսվում է վնասատուների դեմ ավիացիոն	«Հայանտառ» ՊՈԱԿ-ի անտառածածկ տարածքներում 2024 թվականի գարնանային անտառպաթոլոգիական ուսումնասիրությունների ընթացքում	Շրջակա միջավայրի նախարարության կողմից կազմակերպվել է նաև «Օդային եղանակով	2021-2026թ. թ.	

		<p>նպատակով անտառպաթուղզիական ուսումնասիրությունների իրականացում, վնասատուների և հիվանդությունների դեմ կենսաբանական պայքարի իրականացման կազմակերպում,</p>	<p>կենսաբանական պայքարի աշխատանքներ 9000 հա անտառածածկ տարածքներում:</p>	<p>հայտնաբերվել են վնասակար օրգանիզմներով վարակված օջախներ: Շուրջ 9000 հա վնասակար օրգանիզմներով վարակված անտառածածկ տարածքներում նախատեսված էր իրականացնել ավիացիոն կենսաբանական պայքար՝ ուղղաթիռի միջոցով: Եղանակային պայմաններից ելնելով օդային եղանակով նյութերի ցրման աշխատանքները նախատեսվում էր իրականացնել մայիսի երկրորդ տասնօրյակից հունիսի առաջին տասնօրյակն ընկած ժամանակահատվածում:</p> <p>Կազմակերպած գնման մրցույթի արդյունքում ձեռք է բերվել 13500 կգ սնկերի դեմ պայքարի և 36000 կգ միջատասպան հեղուկ նյութեր:</p> <p>Անտառածածկ տարածքներում վնասատուների և հիվանդությունների դեմ կենսաբանական պայքարի միջոցառումներ չեն իրականացվել:</p>	<p>նյութերի ցրման ծառայությունների» ձեռք բերման մրցույթ, ինչը հայտարարվել է չկայացած՝ «Գնումների մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիմքով (ոչ մի հայտ չի ներկայացվել):</p> <p>Հաշվի առնելով ստեղծված իրավիճակը, շրջակա միջավայրի նախարարությունը դիմել է պաշտպանության նախարարությանն ակնկալելով աջակցություն «Օդակաթիլային եղանակով նյութերի ցրման ծառայությունների» մատուցման նպատակով ուղղաթիռի տրամադրման հարցում, սակայն ուղղաթիռները հիմնանորոգման մեջ գտնվելու պատճառով չեն տրամադրվել: Ըստ այդմ առաջարկվել է ավիացիոն կենսաբանական պայքարի աշխատանքներին անդրադառնալ ուղղաթիռների հիմնանորոգումից հետո՝ 2025 թվականին:</p> <p>Հաշվի առնելով ստեղծված իրավիճակը, ինչպես նաև այն հանգամանքը, որ անտառի</p>	
--	--	---	--	--	--	--

					վնասակար օրգանիզմների դեմ պայքարի աշխատանքներն օդակաթիլային եղանակով նյութերի ցրման միջոցով իրականացվում են սահմանափակ ժամանակահատվածում՝ կապված վնասատուների զարգացման ցիկի ավարտով, 2024 թվականին օդակաթիլային եղանակով նյութերի ցրման աշխատանքներ չեն իրականացվել, իսկ ձեռք բերված նյութերը պահատվության է հանձնվել «Հրաշք այգի» ՍՊԸ-ին՝ 2025 թվականին օգտագործելու նպատակով:	
8		3.5 Անտառային կադաստրի վարում	- յուրաքանչյուր տարի անտառային կադաստրի վարում	Անտառների կադաստրի վարման համար անհրաժեշտ հենքի ստեղծման նպատակով հիմք է ընդունվել անտառի ազգային կառավարման տեղեկատվական համակարգը (ԱԱԿՏՀ): Ըստ այդմ նախատեսվում է անտառային տնտեսության վարման հետ կապված տեղեկատվության համատեքստում կադաստրի վարման տվյալները նույնպես լրացնել ԱԱԿՏՀ-ի համապատասխան բաժնում: 2024 թվականի հուլիսի 18-ին շրջակա միջավայրի նախարարության և «Բեսթ Սոֆթ» ՓԲԸ-ի միջև կնքվել է «տվյալների բազայի կառավարման համակարգերի» սպասարկման ծառայության մատուցման ՆՇՄՆ-ԾՁԲ-		2021-2026թ. թ.

				<p>24/30 պայմանագիր, որի շրջանակներում իրականացվել է ԱԱԿՏՀ-ի (NFMIS) համակարգի անխափան աշխատանքի ապահովում և տեխնիկական սպասարկում: Միաժամանակ փորձական կարգով իրականացվել է ԱԱԿՏՀ-ում «Հայանտառ» ՊՈԱԿ-ի մեկ «Անտառտնտեսություն» մասնաճյուղի անտառակառավարման պլանի քարտեզագրական նյութերի ներմուծում, որը հիմք է հանդիսացել համապատասխան ձևաչափի մշակման համար, ինչը կարող է ապահովել գործընթացների շարունակականության համատեքստում՝ «Անտառտնտեսություն» մասնաճյուղերի համար մշակված անտառակառավարման պլանների քարտեզագրական նյութերի ամբողջական ներմուծում ԱԱԿՏՀ-ում:</p> <p>Ինտեգրված կադաստրի ստեղծման ռազմավարական ծրագրից բխող միջոցառումների կատարման ընթացքն ապահովելու նպատակով համապատասխանեցվել են ներկայումս շրջակա միջավայրի նախարարի կողմից հաստատված 13 «Անտառտնտեսություն» մասնաճյուղերի կառավարման պլաններում առկա տարածական տվյալները ՀՀ կառավարության 2022 թվականի հոկտեմբերի 6-ի N 1569-Ն որոշմամբ սահմանված «Անտառներ» բաժնի ձևաչափին, որոնցից 2-ը, արդեն իսկ ներբեռնվել են maparmenia.am հարթակ, մյուսները ներբեռնման փուլում են:</p>		
--	--	--	--	---	--	--

9		<p>3.8 Պետական անտառների, անտառային հողերի օգտագործման տալու և բնության հատուկ պահպանվող տարածքների հողամասերի վարձակալության կամ կառուցապատման իրավունքով տրամադրելու ընթացակարգերի վերանայում</p>	<p>«Անտառները և անտառային հողերը օգտագործման, ինչպես նաև բնության հատուկ պահպանվող տարածքների (բնապահպանական հողերի) հողամասերը վարձակալության կամ կառուցապատման իրավունքով տրամադրման կարգը սահմանելու, ՀՀ կառավարության 2007 թվականի մայիսի 24-ի N806-Ն և ՀՀ կառավարության 2008 թվականի դեկտեմբերի 18-ի N1578-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» Կառավարության որոշման ընդունում</p>	<p>Կառավարության որոշման նախագիծը 2024 թվականի դեկտեմբերի 11-ին ներկայացվել է Կառավարություն</p>	<p>Մշակման ընթացքում ի հայտ եկած նոր հանգամանքների արդյունքում առաջացել էր անհրաժեշտություն լրացուցիչ ուսումնասիրությունների և քննարկումների, ինչն էլ հանդիսացել է ժամկետի խախտման պատճառ</p>	<p>2024 թ .-ի նոյեմբերի 3-րդ տասնօրյակ</p>
10	<p>Կենսաբազմազանության պահպանությունը և կենսասանվտանգության ապահովումը, կենդանական և բուսական աշխարհի օբյեկտների</p>	<p>5.4 ՀՀ տարածքում հանդիպող արդյունագործական և սիրողական որսի օբյեկտ հանդիսացող կենդանիների տեսակային կազմի, տարածվածության, քարտեզագրման և պաշարների գնահատման աշխատանքների</p>	<p>Յուրաքանչյուր տարի՝ -Արդյունագործական և սիրողական որսի օբյեկտ հանդիսացող կենդանիների վիճակի վերաբերյալ արդիականացված, հավաստի և համակարգված տեղեկատվության</p>	<p>Շրջակա միջավայրի նախարարության և ԳԱԱ «Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի միջև 2023 թվականի դեկտեմբերի 1-ին «ՇՄՆ-ԳՀ-ԱՇՁԲ-24/02» ծածկագրով կնքված «Պետական կարիքների համար աշխատանքների կատարման պետական գնման» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում իրականացվել են հետևյալ աշխատանքները.</p>		<p>2022-2026թ թ.</p>

	<p>հաշվառումը.</p>	<p>իրականացում</p>	<p>առկայություն,  -արդյունքների վերլուծություն, օգտագործման ենթակա  զափաքանակների հիմնավորումների պատրաստում,  -տվյալների էլեկտրոնային տեղեկատվական համակարգի ստեղծում, կադաստրի ձևավորում/կատարելագործում, վարման ապահովում:</p>	<ul style="list-style-type: none"> <li>• Պայմանագրի 1-ին չափաբաժնի՝ «Սևանա լճում և նրա ջրհավաք ավազանում ձկան և խեցգետնի պաշարների հաշվառման» աշխատանքների միջանկյալ հաշվետվության հիման վրա փոփոխություն է կատարվել Կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 28-ի «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների 2024 թվականի տարեկան ծրագիրը հաստատելու մասին» N 1656-Ն որոշման մեջ: Սահմանվել է 2024 թվականի համար Սևանա լճում սիգ ձկնատեսակի արդյունագործական որսի տարեկան առավելագույն չափաքանակը՝ 679 տոննա:</li> <li>• 2024 թվականի դեկտեմբերի 13-ին ԳԱԱ «Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվել է Պայմանագրի 1-ին չափաբաժնի ավարտական հաշվետվությունը, ինչի արդյունքների հիման վրա կսահմանվի 2025 թվականի համար Սևանա լճում սիգ ձկնատեսակի արդյունագործական որսի չափաքանակը:</li> <li>• Պայմանագրի 2-րդ չափաբաժնի՝ «Որսի օբյեկտ հանդիսացող կենդանիների հաշվառման» աշխատանքների ավարտական հաշվետվության հիման վրա շրջակա միջավայրի նախարարի 2024 թվականի օգոստոսի 19-ի N 335-Ն հրամանով սահմանվել է 2024-2025</li> </ul>		
--	--------------------	--------------------	---	---	--	--

				թվականների որսի կենդանիների ցանկը, դրանց օգտագործման թույլատրելի չափաքանակները և որսի ժամկետները:		
11		5.5 Լայն կիրառում ունեցող բույսերի /դեղաբույսեր, ուտելի բույսեր/ ուսումնասիրությունների ի հրականացում հանրապետության տարածքում	Յուրաքանչյուր տարի՝ - Բուսական աշխարհի վիճակի վերաբերյալ արդիականացված, հավաստի և համակարգված տեղեկատվության առկայություն, - հաշվառման արդյունքների վերլուծություն, օգտագործման ենթակա չափաքանակների հիմնավորումների պատրաստում, - Տվյալների էլեկտրոնային տեղեկատվական համակարգի ստեղծում, կադաստրի ձևավորում/ կատարելագործում, վարման ապահովում:	Լայն կիրառում ունեցող բույսերի /դեղաբույսեր, ուտելի բույսեր/ ուսումնասիրությունների իրականացում հանրապետության տարածքում չի իրականացվել:	Շրջակա միջավայրի նախարարության կարիքների համար «Լայն կիրառում ունեցող բույսերի /դեղաբույսեր, ուտելի բույսեր/ ուսումնասիրությունների իրականացում հանրապետության տարածքում» աշխատանքների ձեռքբերման նպատակով 2022 թվականի օգոստոսի 16-ին հայտարարված պայմանով մրցույթում հաղթող ճանաչված «Գեոմափիս» ՍՊ ընկերության միջև կնքվել էր պետության կարիքների համար աշխատանքների կատարման պայմանագիր: Համաձայն պայմանագրի՝ կատարման ենթակա աշխատանքի գինը կազմել էր 61 500 000 (վաթսուամեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:  Ֆինանսական միջոցների բացակայության պատճառով 2023 թվականի մարտի 16-ին պայմանագիրը լուծվել է,	2022-2026թ թ.

					<p>արդյունքում աշխատանքներ չեն իրականացվել:</p> <p>Նույն հիմնավորմամբ նախատեսված աշխատանքները չեն իրականացվել նաև 2024 թվականին:</p> <p>Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև այն հանգամանքը, որ սույն աշխատանքների իրականացումը դիտարկվում է նաև 5.3 կետի միջոցառման շրջանակներում, նախարարության կողմից ներկայացվել է հաջորդող տարիների համար սույն միջոցառումը չնախատեսելու առաջարկ, որն ընդունվել և ամրագրվել է Կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 19-ի «ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 2045-Լ որոշման մեջ:</p>	
12	Կլիմայի փոփոխության հետևանքների նկատմամբ	6.7 «Շենքերի էներգաարդյունավետ արդիականացմանն ուղղված ներդրումների	2024թ. և 2025թ. յուրաքանչյուր տարի՝ -էներգետիկ	<ul style="list-style-type: none"> <li>Տեղայնացվել է էներգետիկ կառավարման տեղեկատվական համակարգը (ԷԿՏՀ) և հայաֆիկացվել է ԷԿՏՀ ծրագրային ապահովումը:</li> </ul>	2021-2023թ թ. նոյեմբ	

<p>հարմարվողականության և մեղմման գործողությունների իրականացումը.</p>	<p>ռիսկերի նվազեցում» դրամաշնորհային ծրագրի «Շենքերի ոլորտում չափողականություն, հաշվետվողականություն և հավաստագրում (ՉՀՀ) համակարգի ստեղծում և գիտելիքների կառավարում» բաղադրիչի իրականացում</p>	<p>կառավարման տեղեկատվական համակարգի (ԷԿՏՀ) համակարգչային ծրագրի տեղայնացում և տվյալների ավելացում          -ԷԿՏՀ տվյալների ավտոմատ ստացման համար սարքավորումների, «խելացի հաշվիչների» և կապի միջոցների ձեռքբերում:          -Երևան համայնքի հասարակական շենքերի տվյալների հավաքագրում ու վերլուծում:          -Mershenq.am վեբ-կայքի արդիականացում, տվյալների թարմացում:          -Գովազդային նյութերի պատրաստում և տարածում:          -Ջերմարդիականացված շենքերի էներգետիկ աուդիտների իրականացում և էներգետիկ անձնագրերի կազմում:</p>	<ul style="list-style-type: none"> <li>• Հավաքագրվել և ԷԿՏՀ են ներմուծվել Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող 348 շենքերի (օբյեկտների) տեխնիկական, էներգետիկ և այլ ցուցանիշների վերաբերյալ տվյալները:</li> <li>• Մշակվել է ԷԿՏՀ օգտագործման ուղեցույց:</li> <li>• 58 շենքերի համար իրականացվել է էներգետիկ աուդիտ և կազմվել է էներգետիկ անձնագրեր:</li> <li>• Կատարվել է 2019-2024թթ-ների ընթացքում ջերմարդիականացված շենքերի տվյալների բազայի ճշգրտում:</li> <li>• Մշակվել է Ծրագրի 2024թ-ի հաղորդակցության պլանը:</li> <li>• Պատրաստվել են տեղեկատվական նյութեր և սոցիալական մեդիա հարթակներով իրականացվել են իրազեկման աշխատանքներ:</li> <li>• Իրականացվել է լրագրողական շրջայց Լոռու և Տավուշի մարզերում:</li> <li>• Ծրագրի արդյունքների տեսանելիության բարձրացման համար պատրաստվել են 6 հոդվածներ, որոնք հրապարակվել են կայքերում և տարածվել սոցիալական մեդիա հարթակներում:</li> <li>• Արդիականացվել է Mershenq.am վեբ-կայքը և մուտքագրվել են անհրաժեշտ բոլոր տվյալներն ու տեղեկատվությունը:</li> <li>• Mershenq.am վեբ-կայքում տեղադրման նպատակով պատրաստվել է 116 բազմաբնակարան և 45 հասարակական արդիականացված շենքերի ֆոտոշարք:</li> <li>• Կազմակերպվել է վերապատրաստման դասընթաց՝ «Շենքերի զննում ասբեստ պարունակող նյութերի հայտնաբերման</li> </ul>	<p>երի 3-րդ տասնօրյակ 2024-2026թթ, հունիսի 3-րդ տասնօրյակ</p>
--	--	---	---	---

			<p>-ջերմասարդիականացված շենքերից ջերմոցային գազերի արտանետումների հաշվարկների իրականացում և գնահատում:</p>	<p>համար» թեմայով:</p> <ul style="list-style-type: none"> <li>• Կազմակերպվել է վերապատրաստման դասընթացներ Շիրակի, Արագածոտնի Լոռու, Տավուշի Կոտայքի և Գեղարքունիքի մարզային և համայնքային աշխատակիցների համար՝ «Համայնքային էներգետիկ կառավարման համակարգի ներդրում և էներգետիկ կառավարիչների նշանակում» թեմայով:</li> <li>• Երևան համայնքի ենթակայության օբյեկտներում նշանակված էներգետիկ պատասխանատուների համար կազմակերպվել է 5 օրյա դասընթաց՝ ԷԿՏՀ շահագործման թեմայով:</li> <li>• Կազմակերպվել է 5 օրյա դասընթաց «Շենքերում էներգետիկ աուդիտ և էներգետիկ անձնագրեր» թեմայով:</li> <li>• Տեղադրվել է թվով 30 հատ բաններներ մարզային խոշոր քաղաքներում և մայրուղիների վրա՝ շենքերի էներգաարդյունավետ արդիականացման թեմայով,</li> <li>• Տեղադրվել է թվով 15 հատ երկկողմանի (AB) սքրոլներներ Երևան համայնքում՝ շենքերի էներգաարդյունավետ արդիականացման թեմայով,</li> <li>• Իրականացվել է էներգաարդյունավետ արդիականացված 20 շենքերի թերմոգրաֆիկ նկարահանում:</li> </ul>		
13		<p>6.8 «Անցում էլեկտրական շարժիչով մեքենաների Հայաստանում» ծրագրի իրականացում</p>	<p>1. Էլեկտրական շարժումակությանն առնչվող գնումների ուղեցույցի մշակում, 2. Էլեկտրական շարժումակության</p>	<ul style="list-style-type: none"> <li>• Մշակվել է լիցքավորման կայանների և էլեկտրամոբիլների գնումներին առնչվող առաջարկությունների փաթեթ:</li> <li>• Մշակվել է «Հայաստանի Հանրապետություն էլեկտրական շարժումակության զարգացման</li> </ul>	<p>Կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 19-ի «ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշման մեջ փոփոխություններ</p>	<p>2021-2025թ</p>

			<p>զարգացման քաղաքականության և իրավակարգավորումների փաթեթների մշակում,</p> <p>3. էլեկտրական շարժունակության ազգային ֆորումի անցկացում:</p>	<p>նազնավարությունը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության որոշման նախագիծը:</p> <ul style="list-style-type: none"> <li>• Մշակվել է էլեկտրամոբիլների գնման ուղեցույցը:</li> <li>• Մշակվել է ոլորտին առնչվող օրենսդրական բարեփոխումների փաթեթ:</li> <li>• Եռակողմ համաձայնագիր է կնքվել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի, «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ ՊՀ-ի և «Ավանտգարդ» ՍՊԸ-ի միջև՝ ծրագրի կողմից էլեկտրական շարժիչով 28 տրանսպորտային միջոցների գնման համաֆինանսավորման վերաբերյալ:</li> <li>• ՀՀ պետական գույքի կառավարման կոմիտեի հետ համատեղ իրականացվել է պետության կարիքների համար տրանսպորտային միջոցների գնման գործընթացը, ինչի համար համաֆինանսավորումը Ծրագրի կողմից կազմել է 112 669.2հազ. ՀՀ դրամ,</li> <li>• ՄԱԿ շրջակա միջավայրի ծրագրի համաֆինանսավորմամբ 9 համայնքում (Երևան, Գյումրի, Վանաձոր, Սևան, Իջևան, Դիլիջան, Մեծամոր, Եղեգնաձոր և Աշտարակ) տեղադրվել է թվով 30 հատ լիցքավորման կայան,</li> <li>• Շիրակի և Լոռու մարզերում կազմակերպվել է կարողությունների հզորացման սեմինարներ:</li> </ul>	<p>կատարելու մասին» N 2045-Լ որոշմամբ ծրագրի կատարման ժամկետ է սահմանվել 2025 թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակը:</p>	
14		6.9 «Հայաստանի անտառների կայունություն,	Յուրաքանչյուր տարի՝ 1. 700հա	<ul style="list-style-type: none"> <li>• Իրականացվել են 103.6 հա անտառտնկման և անտառվերականգնման աշխատանքներ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի՝</li> </ul>		2021-2026թ թ.

		<p>հարմարվողականության ն բարձրացում և համայնքային զարգացման կանաչ աճի խթանում՝ կլիմայի փոփոխության մեղմման միջոցով» ծրագրի՝ «Կլիմայի փոփոխության հետևանքների մեղմում և հարմարվողականություն՝ նոր տեխնոլոգիաների փոխանցման միջոցով» բաղադրիչի իրականացում</p>	<p>անտառտնկման և տնկարքների խնամքի աշխատանքների իրականացում, 2. Շահագրգիռ կողմերի համար դասընթացի կազմակերպում:</p>	<ul style="list-style-type: none"> <li>• «Սյունիքի անտառտնտեսություն» մասնաճյուղի տարածքում՝ 15հա, որից՝ ա. 6.5 հա՝ մեկ հեկտարին 2000 տնկիներով անտառտնկում, բ. 8.5 հա՝ մեկ հեկտարին 600 հատ տնկիներով անտառավերականգնում: <ul style="list-style-type: none"> <li>• «Վանաձոր անտառտնտեսություն» մասնաճյուղի տարածքում կատարվել է 37 հա, որից՝ ա. 20 հա՝ մեկ հեկտարին 2000 տնկիններով անտառտնկում, բ. 17 հա՝ մեկհեկտարին 600 հատ տնկիներով անտառավերականգնում: <ul style="list-style-type: none"> <li>• «Տաշիրի անտառտնտեսություն» մասնաճյուղի տարածքում կատարվել է 51.6 հա, որից՝ ա. 32.5 հա՝ մեկ հեկտարին 2000 տնկիններով անտառտնկում, բ. 19.1 հա՝ մեկհեկտարին 600 հատ տնկիներով անտառավերականգնում: <ul style="list-style-type: none"> <li>• «Տաշիրի անտառտնտեսություն», «Սյունիքի անտառտնտեսություն» և «Վանաձոր անտառտնտեսություն» մասնաճյուղերին տրամադրվել է անտառտնկման և անտառավերականգնման համար անհրաժեշտ գործիքներ և աշխատակիցների աշխատանքային պայմանների բարելավման այլ օժանդակ նյութեր:</li> </ul> </li> </ul> </li> </ul> </li></ul>		<p>(ավարտը 2029թ. )</p>
<p>15</p>		<p>6.10 «Հայաստանի Հանրապետության արիդ (Վայոց ձորի մարզ) գոտում կլիմայի փոփոխության ընթացքի մեղմում և հարմարվողականության</p>	<p>Ծրագրի մեկնարկից հետո՝ ըստ ժամանակացույցի. 1.Հողի օրգանական ածխածնի կուտակման հատկությունների մեծացում,</p>	<ul style="list-style-type: none"> <li>• Առցանց քննարկումներ են կազմակերպվել «Կանաչ Կլիմայի» Հիմնադրամի փորձագիտական խմբի հետ, որի ընթացքում քննարկվել են Հիմնադրամի ծրագրի ղեկավարի կողմից ներկայացված դիտողություններն ու առաջարկությունները:</li> </ul>		<p>2022-2026թ թ. նոյեմբերի 3-րդ տասնօ</p>

		ն կարողությունների հզորացում» ծրագրի իրականացում	<p>2. Կլիմայի փոփոխության նկատմամբ լանդշաֆտների և էկոհամակարգերի հարմարվողականության բարձրացում,</p> <p>3. Կլիմայական խելացի գյուղատնտեսական տեխնոլոգիաների ներդրում,</p> <p>4. Ջերմոցային գազերի արտանետումների նվազեցում,</p> <p>5. Արդյունքների պահպանության և շարունակականության ապահովում</p>	<ul style="list-style-type: none"> <li>• Հիմնադրամի մասնագիտական խմբերի կողմից ներկայացվել են հայեցակարգի մի շարք բաժիններին առնչվող հարցադրումներ, որոնց վերաբերյալ մշակվել են պարզաբանումներ և լրամշակված հայեցակարգը ներկայացվել է Կանաչ Կլիմայի հիմնադրամ:</li> <li>• Առցանց հանդիպում է կազմակերպվել Կանաչ Կլիմայի Հիմնադրամի նորանշանակ «Ծրագրի ղեկավար»-ի հետ: Քննարկվել են հայեցակարգին առնչվող հարցեր:</li> <li>• Համապատասխան պարզաբանումներ են ներկայացվել Հիմնադրամի «Ծրագրի ղեկավար»-ի կողմից ներկայացված դիտողություններին և առաջարկություններին:</li> <li>• «Կանաչ Կլիմայի» Հիմնադրամի կողմից հայեցակարգը տրամադրվել է «KPMG» խորհրդատվական կազմակերպության ֆիննական մասնաճյուղին կարծիք ստանալու նպատակով: Կազմակերպությունը ներկայացրել է առաջարկություններ հայեցակարգի բարելավման նպատակով:</li> <li>• Քննարկումներ են կազմակերպվել «KPMG» խորհրդատվական կազմակերպության ֆիննական մասնաճյուղի կողմի հետ:</li> <li>• Հայեցակարգը լրամշակվում է «KPMG» խորհրդատվական կազմակերպության ֆիննական մասնաճյուղի կողմից ներկայացված առաջարկությունների հիման վրա:</li> </ul>		ոյակ
16	Քիմիական նյութերի	7.3 Հայաստանի Հանրապետությունում	-Հայաստանի Հանրապետությունում	Ռեեստրի ձևավորման համար մշակվել է 2022-2023թթ. ընթացքում ՀՀ ներմուծված		2021-2026թ

	էկոլոգիապես անվտանգ կառավարման համակարգի ստեղծումը.	քիմիական նյութերի և խառնուրդների ռեեստրի ձևավորում	քիմիական նյութերի ռեեստրի ազգային (ներպետական) մասի ձևավորման նախապատրաստական աշխատանքներ:	և ՀՀ-ից արտահանված ԱՏԳ ԱԱ 28 (անօրգանական քիմիական նյութեր. թանկարժեք մետաղներ, հազվագյուտ հողային մետաղներ, ռադիոակտիվ տարրերի կամ իզոտոպների անօրգանական կամ օրգանական միացություններ) և ԱՏԳ ԱԱ 29 (օրգանական քիմիական միացություններ) խմբերին դասվող ապրանքների վերաբերյալ տեղեկատվությունը՝ ըստ պետական եկամտների կոմիտեի տեղեկատվական բազայում առկա տվյալների (ըստ ապրանքների հայտարարագրերի և Կառավարության 2018 թվականի հունիսի 28-ի N737-Ն որոշման համաձայն ներկայացված վիճակագրական ձևի):		թ.
17	Ընդերքօգտագործման հետևանքով խախտված տարածքների և ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների լքված, տիրազուրկ տեղամասերի ռեկուլտիվացիայի իրականացումը.	9.1 Ընդերքօգտագործման թափոնների լքված, տիրազուրկ տեղամասերի և օբյեկտների ռեկուլտիվացիայի համար նախագծային փաթեթների մշակում	-Արտադրական լցակույտերի տեղամասերի փակված պոչամբարների տարածքների հստակեցում, ռեկուլտիվացիոն աշխատանքներ իրականացնելու նպատակահարմարության վերաբերյալ համաձայնեցում տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հետ	Շրջակա միջավայրի նախարարությունը դիմել է տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն՝ տրամադրելու ընդերքօգտագործման թափոնների լքված/տիրազուրկ տեղամասերում հաստատված, մնացորդային արդյունաբերական պաշարների ու ընդերքօգտագործման իրավունքի առկայության, ինչպես նաև այդ տարածքներում ռեկուլտիվացիոն աշխատանքներ իրականացնելու նպատակահարմարության վերաբերյալ: ՏԿԵ նախարարությունը ներկայացրել է տեղեկատվություն, դիրքորոշում, ինչպես նաև տեղեկացրել է, որ համաձայն Կառավարության 2023 թվականի մայիսի 11-ի N730-Լ որոշմամբ հաստատված հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարության		2022-2024թ թ.

				գործողությունների պլանի՝ նախատեսված է օգտակար հանաժոների հանքավայրերի և հանքերևակումների թվային բազային հենքի ստեղծում: Թվայնացման աշխատանքներին զուգահեռ կիրականացվի նաև հանքավայրերի և հանքերևակումների գույքագրում, որից հետո հնարավոր կլինի անդրադառնալ հանքավայրերում և հարակից տարածքներում առկա ընդերքօգտագործման թափոնների լցակույտերի ռեկուլտիվացման գործընթացին:		
18	Հողերի աղտոտման և դեգրադացման կանխարգելմանն ու նվազմանն ուղղված քաղաքականության մշակումը և իրականացումը.	10.1 Հայաստանի Հանրապետության տարածքում աղտոտված, դեգրադացված հողերի մոնիթորինգի իրականացում	- Ուսումնասիրության ենթակա օբյեկտի /մոնիթորինգային հարթակի առկայություն -22	Իրականացվել են հողերի աղտոտվածության գնահատման հետազոտական աշխատանքներ լքված/տիրազուրկ մետաղական հանքարդյունաբերական թափոնների՝ Հանքավանի, Ողջիի փակված պոչամբարի, Զանգակատան, Վերնաշենի և Գլաձորի տեղամասերում:	Միջոցառման կատարման նպատակով մշակվել և ներկայացվել է ՀՀ տարածքում աղտոտված, դեգրադացված հողերի մոնիթորինգի իրականացման 2024-2026 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագրի հայտը, ինչը չի ֆինանսավորվել: Բացակայում է նաև միջազգային ֆինանսավորումը:	2022-2026թ.թ.
19	Մեկանգամյա օգտագործման պոլիէթիլենային արտադրանքի գործածության աստիճանական կրճատման և սահմանափակման ապահովումը.	12.1 «Առևտրի և ծառայությունների մասին ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը Կառավարության հավանությանն արժանանալու	Առևտրի օբյեկտներում և --- առևտրի իրականացման վայրերում, շրջիկ առևտրի կետերում մեկանգամյա օգտագործման պլաստիկ իրերի	Մշակվել և սահմանված կարգով դեռևս 2023թ. ապրիլի 27-ին վարչապետի աշխատակազմ է ներկայացվել «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծի փաթեթը: Հաշի առնելով կարգավորման		2024թ. նոյեմբերի 1-ին տասնօրյակ

		վերաբերյալ որոշման ընդունում	որոշակի թիրախային խմբի վաճառքի (իրացման) արգելքի սահմանում	ազդեցության լայն շրջանակը՝ փաթեթը բազմաթիվ անգամ քննարկվել է փուլերում: Ներկայումս 2024 թվականի հոկտեմբերի 10-ի N02/12.6/34675 հանձնարարականով վերադարձվել է՝ վարչապետի 2023 թվականի հունվարի 31-ի N 0211 հանձնարարականի կատարումն ապահովելու և վարչապետի աշխատակազմի կարգավորման ազդեցության գնահատման ու իրավաբանական վարչությունների եզրակացությունների հիման վրա լրամշակելու և առողջապահության և ներքին գործերի նախարարությունների հետ լրացուցիչ քննարկելու առաջարկությամբ:		
20	Շրջակա միջավայրի պահպանության վերահսկողության և մշտադիտարկման միասնական համակարգի կատարելագործումը, թույլտվությունների, լիցենզիաների միասնական և ժամանակակից համակարգերի ներդրումը, առաջնային տեղեկատվության համակարգված կառավարումը,	13.4. Շրջակա միջավայրի բաղադրիչների (մթնոլորտային օդի, ջրային ռեսուրսների՝ ներառյալ քաղցրահամ և ստորերկրյա ջրերի, հողերի, կենսաբազմազանությամբ և թափոնների հեռացման վայրերի մոնիթորինգի դիտացանցերի արդիականացում	Յուրաքանչյուր տարի՝  - շրջակա միջավայրի բաղադրիչների մոնիթորինգի դիտարկումների, դիտակայանների և դիտացանցերի արդի տեխնոլոգիաներով հագեցվածության ապահովում	Մթնոլորտային օդի մոնիթորինգի արդիականացման՝ միջազգային չափանիշներին համապատասխանեցման նպատակով՝ 2024 թվականին շրջակա միջավայրի նախարարությանը հատկացվել է 300 մլն դրամ մթնոլորտային օդի որակի երկու դիտակայանի ձեռքբերման համար, որոնց մատակարարումը և գործարկումն ակնկալվում է 2025 թվականի 1-ին եռամսյակում: Մթնոլորտային օդի որակի համակարգի զարգացման շարունակությունը ակնկալվում է իրականացնել նաև միջազգային դրամաշնորհների շրջանակում: Այդ նպատակով Շրջակա միջավայրի նախարարությունը դիմել է Ճապոնիայի կառավարության «Տնտեսական և սոցիալական զարգացման ծրագիր» դրամաշնորհային օգնության ծրագրին, որի հաստատման դեպքում		2023 - 2026թթ.

	<p>շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության համակարգի բարելավումը՝ հիմնված կանխարգելման սկզբունքի վրա, փորձաքննության որակի բարձրացմանն ուղղված գործուն մեխանիզմների ներդրմամբ</p>			<p>հնարավորություն կլինի արդիակացնել Հայիդրոմետ ՊՈԱԿ-ի մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտացանցի ևս 3 դիտակայան, որոնք զինված կլինեն մթնոլորտային օդի աղտոտիչների ավտոմատ չափվող ժամանակակից (Ճապոնական Horiba մակնիշի) սարքավորումներով:</p> <p>Շրջակա միջավայրի նախարարությունը 2024 թվականի հուլիսին դիմել է ԵՄ պատվիրակության ղեկավարությանը ՀՀ-ԵՄ ՀԸԳ համաձայնագրի ճանապարհային քարտեզով ամրագրված օդի որակի կառավարման բարելավմանն ուղղված մի շարք միջոցառումների իրականացմանը՝ այդ թվում նաև մթնոլորտային օդի որակի համակարգի արդիականացմանն աջակցության խնդրանքով և ԵՄ-ն պատրաստակամություն է հայտնել աջակցություն ցուցաբերել մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի հարցում և դրա համար 2026-2027թթ. արդեն նախատեսվել է օդի որակի մոնիթորինգի 2 դիտակայանի համար միջոցների հատկացում ԵՄ նոր ծրագրում:</p>		
21	<p>Հիդրոոդերևութաբանության և շրջակա միջավայրի մշտադիտարկման համակարգի արդիականացումը՝ դիտարկումների նորագույն տեխնոլոգիաների</p>	<p>14.1 Հիդրոոդերևութաբանական դիտարկումների, կանխատեսումների, տեղեկատվության մշակման, վերլուծության, արխիվացման և տրամադրման ենթահամակարգերի</p>	<p>-- Հիդրոոդերևութաբանական ավտոմատ կայանների տեղադրում և տեղեկատվության գրանցման, փոխանցման և վիզուալիզացման համակարգի ստեղծում</p>	<p>2023թ. ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին ձեռք բերված «Միկրոստեպ-Միս» ընկերության 9 ավտոմատ օդերևութաբանական կայանները տեղադրվել են Կոտայքի, Տավուշի, Գեղարքունիքի և Արարատի մարզերում: Բացի այդ նախկինում տեղադրված 23 ավտոմատ օդերևութաբանական կայանները պետական բյուջեի միջոցների հաշվին համալրվել են ձյան ծածկույթի</p>		<p>2023-2026 թվականներ</p>

	կիրառմամբ.	արդիականացում, տրամադրվող ծառայությունների որակի և հասանելիության մեխանիզմների զարգացում		բարձրության, 4 խորություններում հողի ջերմաստիճանի և խոնավության տվիչներով, ինչպես նաև ջրային մակերևույթից գոլորշացման 6 տվիչներով, որոնցից 3-ը տեղադրվել են Սևանա լճի ավազանում: Բոլոր ավտոմատ օդերևութաբանական կայանները և տվիչները միացվել են տվյալների առցանց ստացման և վիզուալիզացման միասնական համակարգին: EU4USevan ծրագրի աջակցությամբ ձեռք են բերվել գերմանական OTT ընկերության 5 ջրաչափական պտուտաններ, ինչպես նաև «Միկրոստեպ-Միս» ընկերության մեկ ավտոմատ օդերևութաբանական կայան, վերջինս տեղադրվել է Սևանա լճի առափնյա գոտում, որը ևս զինված է ջրային մակերևույթից գոլորշացման տվիչով:		
--	------------	--	--	--	--	--

**Ց Ա Ն Կ**

**ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 18-Ի N 1902-Լ ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾ N 1-ՈՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ, ՍԱԿԱՅՆ 2022-2023 ԹԹ. ԸՆԹԱՑՔՈՒՄ ՉԿԱՏԱՐՎԱԾ ԿԱՄ ՄԱՍՆԱԿԻ ԿԱՏԱՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ**

NN	Նպատակ	Միջոցառումներ	Ակնկալվող արդյունք	ՀՀ կառավարության 18.11.2021 թ.-ի N 1902-Լ որոշմամբ սահմանված ժամկետ/Արտաբալան սի ժամկետ	Ծանոթություն
1	2	3	4	5	

8	Թափոնների (այդ թվում՝ ընդերքօգտագործման), կառավարման համակարգի կատարելագործումը.	8.3. «Պոլիքլորացված բիֆենիլների գործածության տեխնիկական պայմանները հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը»	Պոլիքլորացված բիֆենիլներ պարունակող թափոնների գործածությունը կանոնակարգող նորմատիվ իրավական ակտի նախագիծը մշակվել է, սակայն սահմանված կարգով շրջանառության չի ներկայացվել՝ օրենքով լիազորող նորմի բացակայության պատճառով (ներկայացվել է միայն ներքին շրջանառության): Սույն իրավական ակտի ընդունման լիազորող նորմ սահմանելու համար փոփոխություններ և լրացումներ են կատարվել «Թափոնների մասին» օրենքի նախագծում (այսուհետ՝ Նախագիծ), ինչը ներկայումս, համաձայն վարչապետի 2023 թվականի հունվարի 31-ի N 0211 հանձնարարականի, աշխատանքային կարգով քննարկման փուլում է: Նախագծի ընդունումից անմիջապես հետո պոլիքլորացված բիֆենիլներ պարունակող թափոնների գործածությունը կանոնակարգող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի նախագիծը սահմանված կարգով շրջանառության մեջ կդրվի և կներկայացվի վարչապետի աշխատակազմ:	2022թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ  <b>2024թ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ</b>	
13	Շրջակա միջավայրի պահպանության վերահսկողության և մշտադիտարկման միասնական համակարգի կատարելագործումը, թույլտվությունների, լիցենզիաների միասնական և ժամանակակից	<b>13.2.</b> «Ռազմավարական էկոլոգիական գնահատման իրականացման կարգը սահմանելու մասին» Կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը»	Ընդունվել է Կառավարության 2023թ, դեկտեմբերի 21-ի «Ռազմավարական էկոլոգիական գնահատման կարգի և ռազմավարական էկոլոգիական գնահատման հաշվետվությանը ներկայացվող պահանջները հաստատելու մասին» N 2294 -Ն որոշումը:	2022թ. հունիսի 1-ին տասնօրյակ  <b>2024թ. մարտի 3-րդ տասնօրյակ</b>	

<p>համակարգերի ներդրումը, առաջնային տեղեկատվության համակարգված կառավարումը, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության համակարգի բարելավումը՝ հիմնված կանխարգելման սկզբունքի վրա, փորձաքննության որակի բարձրացմանն ուղղված գործուն մեխանիզմների ներդրումը</p>	<p><b>13.3.</b> «Շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա ազդեցության գնահատման ուղեցույցը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը</p>	<p>Ընդունվել է շրջակա միջավայրի նախարարի 2024թ. հոկտեմբերի 29-ի «Ռազմավարական էկոլոգիական գնահատման և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման ուղեցույցները հաստատելու մասին» N 437-Ն հրամանը:</p>	<p>2022թ. նոյեմբերի 1-ին տասնօրյակ</p> <p><b>2024թ. հունիսի 3-րդ տասնօրյակ</b></p>	
<p>Քիմիական նյութերի էկոլոգիապես անվտանգ կառավարման համակարգի ստեղծումը.</p>	<p>7.2 «ՀՀ «Կայուն օրգանական աղտոտիչների մասին» Ստոկհոլմի կոնվենցիայի իրականացման գործողությունների ազգային ծրագրի 2022-2026 թվականներին իրականացվելիք միջոցառումների ցանկը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը</p>	<p>Նախագծի ընդունման լիազորող նորմ նախատեսված է սահմանել «Քիմիական նյութերի մասին» օրենքով: «Քիմիական նյութերի մասին» օրենքի և ենթաօրենսդրական իրավական ակտերի նախագծերի մշակումը և վարչապետի աշխատակազմ ներկայացնելը» միջոցառումը ներառված է Կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N1902-Լ որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 2300-Լ որոշմամբ հաստատված Կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի «Շրջակա միջավայրի</p>	<p>Նախկին ժամկետ 2022 թ. հունիսի 2-րդ տասնօրյակ</p> <p><b>2026թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ</b></p>	

			<p>նախարարություն» բաժնի «7.Քիմիական նյութերի էկոլոգիապես անվտանգ կառավարման համակարգի ստեղծումը» կետում: Նշված միջոցառման ժամկետ սահմանված է 2026 թվականի սեպտեմբերի 2-րդ տասնօրյակը: Հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետությունում քիմիական նյութերի օրենսդրական կարգավորումները պետք է համահունչ լինեն ինչպես Եվրոպական միության համապատասխան իրավական ակտերի, այնպես էլ Եվրասիական տնտեսական միության իրավական ակտերի պահանջներին, իսկ ԵԱՏՄ շրջանակներում քիմիական նյութերին առնչվող մի շարք հարցեր քննարկման փուլում են, մասնավորապես՝ քիմիական նյութերի դասակարգման, գրանցման, նոթիֆիկացման հետ կապված հարցերը դեռևս կարգավորված, ընդունված և կիրառելի չեն: Նշված հանգամանքով պայմանավորված «Քիմիական նյութերի մասին» օրենքի նախագծի մշակման աշխատանքները դեռևս գտնվում են նախնական փուլում:</p>		
--	--	--	---	--	--